Հաստատված է
Հայաստանի եվրոպական
համալսարանի
գիտական խորհրդի
2023 թվականի նոյեմբերի 28-ի
թիվ 46 նիստում
Ռեկտոր՝ Հ. Բիշարյան

Approved
at the No. 46 session
of the Scientific Council
of the European University of Armenia,
November 28, 2023,
Rector: H. Bisharyan

_____

(ստորագրություն, Կ.S./ signature)

ՀԵՀ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՌՈՒԲՐԻԿՆԵՐԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն քաղաքականությունը սահմանում է Հայաստանի եվրոպական համալսարանում (այսուհետ՝ ՀԵՀ) ուսումնառողների գնահատման քաղաքականության նպատակները, ուսումնառողների կարողունակությունների գնահատման առանձնահատկությունները, գնահատման սկզբունքները, չափանիշներն ու չափորոշիչները:

2. Սույն քաղաքականության մշակման համար հիմք են ծառայել «ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին» ՀՀ Կառավարության 22 դեկտեմբերի 2005 թվականի N 2307-Ն որոշումը, ՀԵՀ ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգի կիրառման կարգի, ՀԵՀ ակադեմիական ազնվության կանոնակարգի և այլ ներքին իրավական ակտերի դրույթները, որոնք միտված են գնահատելու ուսումնառողների ***գիտելիք-ների, հմտությունների ու կարողությունների***

EUA STUDENT ASSESSMENT POLICY AND ASSESSMENT RUBRICS

GENERAL PROVISIONS

1. This policy defines the goals of the student assessment policy at the European University of Armenia (hereinafter referred to as "EUA"), the characteristics of the assessment of student competences, the assessment principles, criteria and standards.

2. This policy is developed based on the RA Government decree N 2307 on "The introduction of the credit system in the higher education system of the Republic of Armenia", approved on December 22, 2005, the provisions of EUA order on ECTS, regulation of EUA academic honesty and other internal legal acts. All these provisions are aimed at assessing the level of acquisition of **knowledge, skills and abilities (hereinafter referred to as competences)** of students.

(այսուհետ՝ կարողունակություն) ձեռքբերման մակարդակը:

3. Սույն Քաղաքականությունը հաստատում ու դրանցում փոփոխություններ է կատարում ՀԵՀ գիտական խորհուրդը (այսուհետ՝ Գիտխորհուրդ):

4. ՈՒսումնառողների ձեռք բերած կարողունակությունների գնահատումը ողջ ուսումնական գործընթացի անբաժանելի մասն է:

5. Գնահատումը ՀԵՀ-ում իրականացվում է սույն քաղաքականության շրջանակներում սահմանված գնահատման սկզբունքների, չափանիշների և չափորոշիչների հիման վրա:

7. ՀԵՀ-ում սովորողների գնահատման քաղաքականության նպատակն է.

ա) նպաստել սովորողների կարողունակությունների ձեռքբերմանն ու զարգացմանը,

բ) հետևել սովորողների ուսումնական առաջընթացին,

գ) հավաքագրել և անհրաժեշտության դեպքում լիազոր անձին /դասախոս, դեկան, ամբիոնի վարիչ, ուսումնական գծով պատասխանատուներ, մենթորներ, ծնողներ/ տրամադրել տեղեկատվություն սովորողի կարողունակությունների ձեռքբերման մակարդակի և առաջընթացի վերաբերյալ,

դ) ապահովել մասնագիտությունների կրթական ծրագրերի և գնահատման համակարգի շարունակական բարելավումը:

8. Գնահատումը մատուցվող կրթական ծրագրերով սահմանված կարողունակությունների ձեռքբերման մակարդակի վերաբերյալ հավաստի տեղեկատվության

3. This policy is approved and amended by the EUA Scientific Council (hereinafter referred to as Scientific Council).

4. Assessment of students' achieved competence is an integral part of the entire educational process.

5. At the EUA the assessment is based on the assessment principles, criteria and standards defined within the framework of this Policy.

7. The goals of the student assessment policy at the EUA are:

a) to contribute to the acquisition and development of students' competence;

b) to monitor the educational progress of students;

c) to collect and, if necessary, to provide the authorized person (lecturer, dean, head of the chair, educational officers, mentors, parents) with information on the level and progress of the student's competences;

d) to ensure the continuous improvement of educational programs and assessment system.

8. Assessment is the continuous process of collecting and analyzing reliable information about the level of achievement of the competencies defined by the educational programs.

հավաքագրման և վերլուծության շարունակական գործընթացն է:

9.ՀԵՀ-ում ուսումնառողների կարողունակությունների ձեռքբերումը գնահատվում է ՀՀ պետական և եվրոպական կրթական համընդհանուր ընդունված ստանդարտների, ՄԿԾ-ների և առարկայական ծրագրերի բովանդակությանն ու պահանջներին համապատասխան:

10. ՀԵՀ-ում ուսումնառողների կարողունակությունների գնահատման առանձնահատկություններն են՝

ա) գնահատվում է ոչ միայն արդյունքը, այլև ուսումնառողի գործունեությունը,

բ) գնահատվում են ուսումնառողի անհատական ձեռքբերումները,

գ) գնահատման մեթոդները պետք է համահունչ լինեն կրթական վերջնարդյունքներին:

11. ՀԵՀ-ում ուսումնառողների գնահատումը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

ա) **Արժանահավատություն** - գնահատման մեթոդներն անմիջապես փոխկապակցված են դասընթացի կրթական վերջնարդյունքներին և չափում են ուսումնառողների կողմից դրանց ձեռքբերման մակարդակը:

բ) **Հավաստիություն** – գնահատման արդյունքը պետք է հավաստի ուսումնառողի փաստացի ձեռքբերված կարողունակություն:

գ) **Անաչառություն** – գնահատումը պետք է լինի անկողմնակալ ու արդար,

դ) **Թափանցիկություն** – գնահատումը պետք է լինի հասանելի ուսումնառողին՝ հիմնվելով հետադարձ կապի վրա:

9. The level of the achieved competence of EUA students is assessed in accordance with the content and requirements of the RA state and European universally accepted educational standards, professional educational programs (PEP) and course guides.

10. The characteristic features of the assessment of students' competences at the EUA are:

a) not only the result is assessed, but also the student's learning activity;
b) student's individual achievements are assessed;
c) assessment methods should be consistent with learning outcomes.

11. The assessment of students at the EUA is based on the following principles:

a) **Trustworthiness** - assessment methods are directly related to the learning outcomes of the course and measure the level of their achievement by students.
b) **Reliability** - the result of the assessment should confirm the actual achieved competence of the learner.
c) **Impartiality** - the assessment must be impartial and fair.
d) **Transparency** – assessment should be available to the learner based on feedback
e) **Adequacy** - the assessment must be adequate to the real abilities of the students,
f) **Clarity** - the assessment should clearly show the dynamics of the students' academic progress.

ե) **Համարժեքություն** - գնահատումը պետք է համարժեք լինի ուսումնառողների իրական ունակություններին:

զ) **Հստակություն**- գնահատումը պետք է հստակ ցույց տա ուսումնառողների ակադեմիական առաջադիմության դինամիկան:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱԶՄԱԳՈՐԾՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԵՀ-ՈՒՄ

12. Ուսումնառողի կարողունակությունների գնահատման բազմագործոնային մոտեցումը հիմնվում է ՀԵՀ ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգի կիրառման կարգի դրույթների վրա:

13. Գնահատման բազմագործոնային համակարգը ենթադրում է գնահատման գործոնների և դրանց կշիռների հիման վրա կիսամյակի ընթացքում ուսումնառողի ամփոփիչ գնահատականի ձևավորում՝ հաշվի առնելով հաճախումները, գիտելիքների ստուգման միջանկյալ և ամփոփիչ փուլերը, սեմինար, անհատական աշխատանքը, ընթացիկ ակտիվությունը և արտալսարանային աշխատանքը՝

14. ՀԵՀ-ում ուսումնառողների գնահատումը իրականացվում է 100 միավորային գնահատման համակարգով:

15. Կիսամյակի ընթացքում, ուսումնական գործընթացին զուգահեռ, փուլերով կատարվում է գիտելիքի ստուգման և գնահատականի ձևավորման գործընթաց՝ համաձայն հետևյալ չափանիշների՝

ա) ընթացիկ ակտիվություն,

բ) հաճախումները,

THE MULTI-FACTOR ASSESSMENT SYSTEM AT THE EUA

12. The multi-factorial approach to the assessment of the student's competence is based on the provisions of the application of the accumulation system and transfer procedure on “Application of the system of accumulation and transfer of academic credits of EUA”.

13. The multi-factor assessment system implies the formation of a student's final assessment during the semester based on assessment factors and their principles, taking into account attendance, intermediate and final stages of knowledge verification, seminar, individual work, current activity and extracurricular work.

14. The assessment of students at the EUA is carried out with a 100-point grading system.

15. During the semester, parallel to the educational process, a process of knowledge verification and assessment is carried out in stages, according to the following standards:

a) current activity;
b) attendance;
c) individual/research/project work;
d) intermediate test;
e) summative test.

գ)անհատական/հետազոտական/նախագծային աշխատանք,
դ) միջանկյալ ստուգում,
ե) ամփոփիչ ստուգում:

16. Սույն քաղաքականության 13-րդ կետում թվարկված ստուգման ձևերից յուրաքանչյուրը, բացի հաճախումներից ենթադրում է հստակ առաջադրանքի հանձնարարում և գնահատում՝ ըստ չափանիշների ու չափորոշիչների:

17. ՀԵՀ-ում սահմանված են ուսումնառողների ձեռքբերած կարողունակությունների մակարդակը չափող հիմնական գնահատման մեթոդները.
ա) բանավոր հարցում, սեմինար,
բ) գրավոր առաջադրանք,
գ) անհատական, հետազոտական, վերլուծական, նախագծային աշխատանք
դ) խնդիրների, իրավիճակային խնդիրների լուծում
ե) քննարկում/բանավեճ
զ) խմբային աշխատանք/ համագործակցային աշխատանք և այլն:

18. Բացի սույն քաղաքականության 17-րդ կետում նշված գնահատման մեթոդներից կարող են կիրառվել նաև այլ մեթոդներ՝ ըստ դասընթացի կրթական վերջնարդյունքների: Այս պարագայում դասախոսը ամբիոնի հետ համաձայնեցված մշակում է գնահատման մեթոդին համապատասխան գնահատման ռուբրիկը և ներառում համապատասխան դասընթացի ծրագրում:

19. Միջանկյալ, ամփոփիչ ստուգումների առաջադրանքների գնահատման ժամանակ գնահատման ռուբրիկը կարող է փոփոխվել դասընթացի առանձնահատկություններից

16. Each of the test forms listed in provision 13 of this Policy, in addition to attendance, implies a clear task assignment and assessment according to criteria and standards.

17. The main assessment methods for measuring the level of competence achieved by EUA students are:
a) oral questioning, seminar;
b) written task;
c) individual, research, analytical, project work;
d) solving problems, situational problems;
e) discussion/debate;
f) group work/ cooperative work etc.

18. In addition to the assessment methods mentioned in provision 17 of this Policy, other methods may be used according to the educational outcomes of the course. In this case, the lecturer, in agreement with the chair, develops the assessment rubric corresponding to the assessment method and includes it in the corresponding course program.

19. During the assessment of the tasks of the intermediate and final examinations, the assessment rubric can be changed based on the specifics of the course upon prior agreement with the chair.

ելնելով նախապես համաձայնեցվելով ամբիոնի հետ:

20. Գնահատման մեթոդներն ու դրանց համապատասխան ռուբրիկները ներկայացված են Աղյուսակներ 1-6-ում:

20. The assessment methods and their corresponding rubrics are presented in Tables 1-6.

Աղյուսակ 1. Բանավոր հարցման, սեմինարի գնահատման ռուբրիկ/
Table 1: Rubric for oral questioning and seminar assessment

Գնահատման չափանիշներ/ Assessment criteria	Միավորներ/Scores			
	Անբավարար/ Unsatisfactory 0-40	Բավարար/ Satisfactory 41-60	Լավ/ Good 61-85	Գերազանց/ Excellent 86-100
Նյութի տրամաբանական ներկայացում/ Logical presentation of material (65%)	Չի կարողանում ներկայացնել տեսական նյութը / Fails to present the theoretical material	Ներկայացնում է պարզունակ մտքեր և հիմնական սահմանումներ/ Introduces basic ideas and basic definitions	Ներկայացնում է տրամանաբական հերթականությամբ ամփոփ ավարտուն մտքեր/ Presents summary concluding thoughts in chronological order	Նյութը ներկայացնում է համակարգված և հիմնավորում է օրինակներով/ The material is presented systematically and substantiated with examples
Հետադարձ կապ/Feedback (20%)	Չի կարողանում պատասխանել թեմայի վերաբերյալ հարցերին/ Unable to answer questions about the topic	Տալիս է պարզունակ պատասխաններ և չի կարողանում մեկնաբանել և հիմնավորել պատասխանները/ Gives simplistic answers and fails to interpret and justify answers	Տալիս է տեսական պատասխաններ, որոնք մասամբ է կարողանում գործնականում հիմնավորել/ Gives theoretical answers, which he can partially justify in practice	Տալիս է հստակ և հիմնավոր պատասխաններ/ Gives clear and reasoned answers
Բանավոր ներկայացման հմտություններ/ Oral presentation skills (15%)	Հաղորդակցման վատ հմտություններ և ժամանակի վատ կառավարում/ Poor communication skills and poor time management	Հաղորդակցման բավարար հմտություն, ժամանակի չափավոր օգտագործում/ Adequate communication skills, moderate use of time	Հաղորդակցման լավ հմտություններ, ժամանակի արդյունավետ կառավարում/ Good communication skills, effective time management	Կարողանում է լիարժեք և համամասնորեն կառավարել հատկացված ժամանակը/ Able to manage allocated time fully and proportionately

Աղյուսակ 2. Գրավոր առաջադրանքի գնահատման ռուբրիկ / Table 2: Rubric for writing assignment assessment

Գնահատման չափանիշներ/ Assessment criteria	Միավորներ/ Scores			
	Անբավարար/ Unsatisfactory 0-40	Բավարար/ Satisfactory 41-60	Լավ/ Good 61-85	Գերազանց / Excellent 86-100
Նյութի հստակ և կապակցված շարադրումը/ Clear and coherent presentation of material (25%)	Չի կարողանում գաղափարները գրավոր կերպով փոխանցել/ Can't communicate ideas in a written form	Որոշակի հստակությամբ գրավոր կերպով փոխանցում է մտքերը/ Communicates ideas in a written form with some clarity	Գաղափարները հստակ և արդյունավետ գրավոր կերպով հաղորդում է/ Communicates ideas clearly and effectively in a written form	Գաղափարները ներկայացնում է բացառիկ մասնագիտական բառապաշարի շարադրանքով/
Ներկայացված նյութի հիմնավորվածություն/ Validity of the presented material (50%)	Ներկայացված չէ որևէ հիմնավոր նյութը/ No supporting material has been submitted	Ներկայացված են պարզունակ մտքեր և հիմնական սահմանումներ/ Primitive ideas and basic definitions are presented	Ներկայացված են տրամանաբական հերթականությամբ ամփոփ ավարտուն մտքեր/ Summary concluding thoughts are presented in chronological order	Ներկայացված են համակարգված տեղեկություններ, որոնք հիմնավորված են օրինակներով/ Systematic information supported by examples is presented
Քերականական և ուղղագրական սխալների առկայություն/ Presence of grammatical and spelling errors (10%)	Հաճախ թույլ է տալիս քերականական և ուղղագրական սխալներ/ Makes frequent grammatical and spelling mistakes	Երբեմն թույլ է տալիս քերականական և ուղղագրական սխալներ/ Occasionally makes grammatical and spelling mistakes	Ունի քերականական և ուղղագրական քիչ սխալներ/ Has few grammatical and spelling errors	Քերականական և Ուղղագրական սխալներ գրեթե առկա չեն/ Grammatical and Spelling errors are almost non-existent
Կառուցվածք և տրամաբանություն/ Structure and Logic (15%)	Գրավոր փաստաթղթերում չկա կառուցվածք կամ տրամաբանություն/ There is no structure or logic in written documents	Գրավոր փաստաթղերը հիմնականում ունեն կազմակերպված կառուցվածք/ Written documents generally have an organized structure	Փաստաթուղն ունի լավ կազմակերպված և տրամաբանական կառուցվածք/ The document is well organized and logically structured	Փաստաթուղթն ունի հստակ պլանավորում, տրամաբանական կառուցվածք և սահունություն/ The document has clear planning, logical structure and fluency

Աղյուսակ 3. Անհատական, հետազոտական, վերլուծական, նախագծային աշխատանքի գնահատման ռուբրիկ / Table 3: Rubric for individual, research, analytical, project work assessment

Գնահատման չափանիշներ/ Assessment criteria	Միավորներ/ Scores			
	Անբավարար/ Unsatisfactory 0-40	Բավարար/ Satisfactory 41-60	Լավ/ Good 61-85	Գերազանց / Excellent 86-100
Տեղեկատվության վերլուծություն/ Data analysis (20%)	Չի կարողանում վերլուծել տեղեկատվությունը / Unable to parse information	Որոշակի ճշգրտությամբ վերլուծում է տեղեկատվությունը/ Analyzes information with some precision	Ճշգրիտ և արդյունավետ վերլուծում է տեղեկատվությունը/ Analyzes information accurately and efficiently	Վերլուծում է տեղեկատվությունը բացառիկ ճշգրտությամբ և խորությամբ/ Analyzes information with exceptional accuracy and depth

Տվյալների և փաստերի մեկնաբանություն/ Interpretation of data and facts (20%)	Սխալ է մեկնաբանում տվյալները և փաստերը/ Misinterprets data and facts	Երբեմն սխալ է մեկնաբանում տվյալներն ու փաստերը/ Sometimes misinterprets data and facts	Հազվադեպ է սխալ մեկնաբանում տվյալներն ու փաստերը/ Rarely misinterprets data and facts	Հազվադեպ կամ երբեք սխալ չի մեկնաբանում տվյալներն ու փաստերը/ Rarely or never misinterprets data and facts
Արժեքավոր եզրակացություններ/ Valuable conclusions (25%)	Տալիս է ոչ վերաբերելի կամ սխալ եզրակացություններ / Gives irrelevant or incorrect conclusions	Տալիս է մասամբ վերաբերելի եզրակացություններ/ Gives partially relevant conclusions	Տալիս է վերաբերելի և լավ հիմնավորված եզրակացություններ / Provides relevant and well-reasoned conclusions	Տալիս է խիստ վերաբերելի և ամբողջությամբ հիմնավորված եզրակացություններ/ Provides highly relevant and fully justified conclusions
Քննադատողական մտածողության առկայություն/ Presence of critical thinking (10%)	Զուրկ է քննադատական մտածողության հմտությունից/ Lacks critical thinking skills	Ցուցաբերում է քննադատական մտածողության հիմնական հմտություններ/ Demonstrates basic critical thinking skills	Ցուցաբերում է քննադատական մտածողության ուժեղ հմտություններ/ Demonstrates strong critical thinking skills	Ցուցաբերում է բացառիկ քննադատական մտածողության հմտություններ/ Demonstrates exceptional critical thinking skills
Ներկայացվող նյութի բովանդակությունը/ The content of the presented material (25%)	Աշխատանք առկա չէ, թիմը առաջադրանքի նպատակը չի իրականացրել/ There is no work available, the team did not complete the task goal	Ներկայացված նյութը սահմանափակ է, ուսանողներին չի հաջողվել իրականացնել առաջադրանքի համակողմանի ուսումնասիրություն և նպաստել նպատալի լիարժեք իրականացմանը/ The presented material is limited, the students did not manage to carry out a comprehensive study of the task and contribute to the full implementation of the purpose	Ներկայացվող նյութում առկա է հստակ համառոտագրություն, ներկայացվել են կարևոր ասպեկտները, առաջադրանքի նպատակը հիմնականում իրականացված է/ There is a clear summary in the presented material, the important aspects are presented, the purpose of the task is mostly fulfilled.	Ուսանողներին հաջողվել է իրականացնել ճիշտ համառոտագրություն և համեմատական վերլուծություն, առաջադրանքի նպատակը լիովին իրականացված է/ The students managed to carry out a correct summary and comparative analysis, the purpose of the task was fully realized

Աղյուսակ 4. Խնդիրների, իրավիճակային խնդիրների լուծման գնահատման ռուբրիկ
Table 4: Rubric for assessment of solving problems and situational problems

Գնահատման չափանիշներ/ Assessment criteria	Միավորներ/ Scores			
	Անբավարար/ Unsatisfactory 0-40	Բավարար/ Satisfactory 41-60	Լավ/ Good 61-85	Գերազանց / Excellent 86-100
Խնդրի առարկայի վերաբերյալ տեսական գիտելիքներ/ Theoretical knowledge on the subject matter (15%)	Չի տիրապետում խնդրի առարկայի վերաբերյալ տեսական գիտելիքների/ Does not possess theoretical knowledge on the subject matter	Տիրապետում է խնդրի առարկայի վերաբերյալ պարզունակ գիտելիքների/ Possesses rudimentary knowledge of the subject matter	Տիրապետում է խնդրի առարկայի վերաբերյալ տրված տեսական նյութին և կարողանում է մեկնաբանել պատճառահետևանքային կապերը/ Possesses the given theoretical material on the subject matter and is able to interpret cause and effect relationships	Տիրապետում է խնդրի բոլոր ասպեկտների վերաբերյալ ամբողջական տեսական մոտեցումներին, կարողանում է գործնականում կիրառել խնդրի լուծման նպատակով/ Possesses complete theoretical approaches to all aspects of the problem, is able to apply them in practice for the purpose of solving the problem
Տրամաբանական մոտեցում/ Logical approach (15%)	Չի կարողանում տրամաբանել/ Can't reason	Տրամաբանական եզրահանգումներ հիմնված են միայն տեսական գիտելիքների վրա/ Logical conclusions are based only on theoretical knowledge	Կարողանում է կատարել տեսական և գործնական տրամաբանական եզրահանգումներ/ Able to make theoretical and practical logical conclusions	Տիրապետում է խնդրի ողջ տրամանաբանական կառուցվածքին/ Knows the entire logical structure of the problem
Խնդրի վերլուծություն համադրում/ Compilation of problem analysis (30%)	Չի կարողանում դասակարգել խնդրի բաղադրիչները, վերլուծել և համադրել/ Can't categorize, analyze, and compare problem components	Կարողանում է դասակարգել խնդրի բաղադրիչները, կատարում է պարզունակ վերլուծություն սակայն չի կարողանում համադրել ստացված արդյունքները/ Able to categorize the components of the problem, performs a simple analysis but is unable to combine the obtained results	Կարողանում է դասակարգել խնդրի բաղադրիչները և վերլուծել դրանք, սակայն ոչ լիարժեք է համադրում ստացված արդյունքները/ Able to categorize the components of a problem and analyze them, but does not fully synthesize the results obtained	Կարողանում է լիարժեք դասակարգել խնդրի բաղադրիչները, և վերլուծել դրանք և համադրել ստացված արդյունքները/ Able to fully categorize the components of the problem, and analyze them and compare the obtained results

Խնդրի լուծում/ Problem Solving (30%)	Չի կարողանում առաջադրել խնդիրի լուծման տարբերակներ/ Unable to propose solutions to the problem	Կարողանում է առաջարկել խնդրի լուծման հնարավոր նվազագույն տարբերակներ, չի կարողանում հիմնավորել ընտրված լուծումը/ Able to propose minimal possible solutions to the problem, unable to justify the chosen solution	Կարողանում է առաջադրել խնդրի լուծման այլընտրանքային լուծումներ և ընտրել օպտիմալ լուծում, սակայն ոչ լիարժեք է հիմնավորում ընտրված լուծումը/ Able to propose alternative solutions to a problem and choose an optimal solution, but does not fully justify the chosen solution	Կարողանում է առաջադրել խնդրի լուծման այլընտրանքային լուծումներ, ընտրել և հիմնավորել ամենարդյունավետ լուծումը/ Able to propose alternative solutions to a problem, choose and justify the most effective solution
Ստեղծարար և նորարարական մոտեցման առկայություն/ Availability of a creative and innovative approach (10%)	Լուծումների մեջ բացակայում է ստեղծարարություն նու նորարարությունը/ Solutions lack creativity and innovation	Դրսևորում է ստեղծարարություն և նորարարություն, ինչը սակայն չի նպաստում խնդրի արդյունավետ լուծմանը/ Creativity and innovation are manifested, but this does not contribute to the effective solution of the problem	Դրսևորում է համարժեք ստեղծարարություն և նորարարություն, ինչը մասամբ է նպաստում խնդրի արդյունավետ լուծմանը/ Adequate creativity and innovation is demonstrated, which partly contributes to effective problem solving	Դրսևորում է լուծումների բացառիկ ստեղծարարություն և նորարարություն/ Demonstrates exceptional creativity and innovation in solutions

Աղյուսակ 5. Քննարկման/բանավեճի գնահատման ռուբրիկ / Table 5: Rubric for assessment of discussions/debates

Գնահատման չափանիշներ/ Assessment criteria	Միավորներ/ Scores			
	Անբավարար/ Unsatisfactory 0-40	Բավարար/ Satisfactory 41-60	Լավ/ Good 61-85	Գերազանց / Excellent 86-100
Կապակցված մտքեր ներկայացում/ Presentation of related ideas (25%)	Չի կարողանում փոխանցել մտքերը: Հաճախ խոսում է անհասկանալի կամ անհամապատասխան/ Can't communicate thoughts. Often speaks slurred or incoherently	Որոշ պարզությամբ փոխանցում է մտքերը, սակայն չկա համակարգվածություն և հիմնական գաղափարի առկայություն: Երբեմն խոսում է անհամահունչ:/ Conveys ideas with some clarity, but lacks organization and main idea. Sometimes speaks incoherently.	Հստակ և արդյունավետ կերպով հաղորդում է գաղափարները: Խոսում է համահունչ և համոզիչ/ Communicates ideas clearly and effectively. Speaks coherently and persuasively.	Հաղորդում է գաղափարները բացառիկ պարզությամբ: Խոսում է հարուստ մասնագիտական բառապաշարով և համոզիչ/ Communicates ideas with exceptional clarity. Speaks with a rich professional vocabulary and is persuasive.
Մասնակցություն բովանդակային քննարկման/բանավեճի/ Participation in substantive discussion/debate (35%)	Չի մասնակցում բովանդակալից քննարկումների/ բանավեճի Does not engage in meaningful discussion/debate	Ներգրավվում է քննարկումների/ բանավեճի մեջ, բայց արտահայտում է պարզունակ մտքեր/ Engages in discussions/debates but expresses simplistic ideas	Ներգրավվում է բովանդակալից և համապատասխան քննարկումների/ բանավեճի մեջ/ Engages in meaningful and relevant discussion/debate	Վարում և հարստացնում է քննարկումը/ բանավեճը խորությամբ/ Conduct and enriches the discussion/debate in depth
Փաստարկների ներկայացում/ Presentation of arguments (25%)	Չի կարողանում ներկայացնել հակափաստարկներ/փաստարկներ/ Fails to present counterarguments/arguments	Ներկայացում է պարզունակ հակափաստարկներ/ փաստարկներ՝ մակերեսային հիմնավորմամբ/ Presents simplistic counterarguments/arguments with superficial reasoning	Ներկայացնում է հիմնավոր փաստարկներ/ հակափաստարկներ / Presents sound arguments/counterarguments	Ներկայացնում է հիմնավոր փաստարկներ/ հակափաստարկներ գործնական կիրառությամբ/ Presents sound arguments/counter-arguments with practical application
Լսելու հմտությունների դրսևորում/ Demonstration of listening skills (15%)	Չի ցուցաբերում լսելու ցանկություն/ Shows no desire to listen	Երբեմն ընդհատում է ուրիշներին, ունի լսելու բավարար հմտություն/ Sometimes interrupts others, has good listening skills	Դրսևորում է ակտիվ լսելու հմտություններ/ Demonstrates active listening skills	Դրսևորում է ակտիվ լսելու բացառիկ հմտություններ/ Demonstrates exceptional active listening skills

Աղյուսակ 6. Խմբային աշխատանքի / Համագործակցային աշխատանքի գնահատման ռուբրիկ

Table 6: Rubric for group work/cooperative work assessment

Գնահատման չափանիշներ	Միավորներ/ Scores			
	Անբավարար/ Unsatisfactory 0-40	Բավարար/ Satisfactory 41-60	Լավ/ Good 61-85	Գերազանց / Excellent 86-100
Համապատասխան գրականության ուսումնասիրություն / A review of relevant literature (10%)	Չի ուսումնասիրել որևէ գրականություն/ Did not review any literature	Ուսումնասիրել է առնվազն 2 հավաստի ինֆորմացիոն աղբյուր/ Studied at least 2 reliable sources of information	Ուսումնասիրել է 3-4 հավաստի ինֆորմացիոն աղբյուր/ Studied 3-4 reliable sources of information	Ուսումնասիրել է 4-ից ավել հավաստի ինֆորմացիոն աղբյուր/ Studied more than 4 reliable sources of information
Խմբի ուսանողների մասնակցայնություն Participation of group students (20%)	Խումբային աշխատանքը որևէ արդյունք չի ապահովել: Սովորողները չեն կարողանում նպաստել թիմի նպատակների իրականացմանը/ Group work did not produce any results. Learners are unable to contribute to team goals.	Խումբը ներկայացնում է յուրաքանչյուրին հատկացված դերը, սակայն իրականացված աշխատանքը հստակ չէ, թիմի անդամները չեն նպաստել թիմի նպատակների արդյունավետ իրականացմանը/ The team represents the role assigned to each, but the work performed is not clear, the team members did not contribute to the effective implementation of the team's goals	Խմբի յուրաքանչյուր անդամ ներկայացնում է իր կատարած աշխատանքը, սակայն գործառույթները բաշխված են ոչ համաչափ: Թիմի անդամները նպաստում են թիմի նպատակների իրականցմանը/ Each member of the group presents the work he has done, but the functions are distributed unevenly. Team members contribute to the team's goals.	Կատարված է հստակ հավասարաչափ աշխատանքի բաժանում: Թիմի բոլոր անդամները լիովին նպաստել են թիմ նպատակների իրականացմանը/ A clear equal division of labor has b made. All team members contributed fully to the tea goals.
Տեսասահիկի առկայություն/ PPT availability (10%)	Աշխատանքը իրականացված չէ/ The work is not done	Տեսասահիկ առկա չէ No PPT available	Առկա է տեսասահիկ, որը առավելապես տեքստեր է պարունակում և հետաքրքրություն չի առաջացնում ունկնդիրների շրջանում/ There is a video slide that contains mostly texts and does not generate interest among listeners	Առկա է հետաքրքիր տեսասահիկ, որը ամբողջությամբ արտացոլում է առաջադրանքի բովանդակությունը/ There is an interesting video slide that fully reflects the content of the task

Ներկայացվող նյութի բովանդակությունը/ The content of the presented material (40%)	Աշխատանք առկա չէ, թիմը առաջադրանքի նպատակը չի իրականացրել/ There is no work available, the team did not complete the task goal	Ներկայացված նյութը սահմանափակ է, ուսանողներին չի հաջողվել իրականացնել առաջադրանքի համակողմանի ուսումնասիրություն և նպաստել նպատալի լիարժեք իրականացմանը/ The presented material is limited, the students did not manage to carry out a comprehensive study of the task and contribute to the full implementation of the purpose.	Ներկայացվող նյութում առկա է հստակ համառոտագրություն, ներկայացվել են կարևոր ասպեկտները, առաջադրանքի նպատակը հիմնականում իրականացված է/ There is a clear summary in the presented material, the important aspects are presented, the purpose of the task is mostly fulfilled	Ուսանողներին հաջողվել է իրականացնել ճիշտ համառոտագրություն և համեմատական վերլուծություն, առաջադրանքի նպատակը լիովին իրականացված է/ The students managed to carry out a correct summary and comparative analysis, the purpose of the task was fully realized
Թիմային աշխատանքի և համագործակցային հմտություններ/ Teamwork and collaborative skills (20%)	Թիմի անդամները չեն դրսևորում թիմում աշխատելու և համագործակցելու հմտություններ/ Team members do not demonstrate teamwork and collaboration skills	Թիմում առկա է որոշակի համագործակցային միջավայր, դրսևորվում է ոիմային աշխատանք, սակայն առկա են բացահայտ դոմինանտ և բացահայտ պասիվ անդամներ/ There is a certain cooperative environment in the team, cooperative work is demonstrated, but there are clearly dominant and clearly passive members.	Թիմի անդամները արդյունավետորեն համագործակցում են միմյանց հետ և հստակ դրսևորում են թիմային աշխատանքի հմտություններ/ Team members collaborate effectively with each other and clearly demonstrate teamwork skills	Թիմի անդամները դրսևորում են բացառիկ և անխափան թիմում աշխատելու և համագործակցելու հմտություններ/ Team members demonstrate exceptional and seamless teamwork and collaboration skills

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

21. Սույն քաղաքականությունն ուժի մեջ է մտնում Գիտխորհրդի հաստատման և հրապարակման պահից:

22. Տեքստերի միջև հակասությունների դեպքում գերակայությունը տրվում է հայերեն տարբերակին:

FINAL PROVISIONS

21. This Policy will enter into force upon approval and publication by the EUA Scientific Council.

22. In case of contradictions between the texts, the priority is given to the Armenian version.